№ 31 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 20 ՕԳՈՍՏՈՍԻ 1894 № 31

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում դրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հունձքը առատ է բայց մշակները սակաւ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Հնդկաստանից. Արտաքին լուրեր.—Բանասիրական Ահա թէ ինչպիսի կրօնուսոյցներ ունինք.—Յայտարարութիւններ:

ՀՈՒՆՁՔԸ ԱՌԱՏ Է, ԲԱՅՑ ՄՇԱԿՆԵՐԸ ՍԱԿԱՒ

Այն օրուանից ինչ „Շաւիղը“ պարբերական հայոց գիւղական կրթութեան խնդիրը հերթական հարց դարձնեց, և սկսեց տալ թղթակցութիւններ խուլ գիւղերի մասնաւոր դրութեան մասին, յայտնուեցաւ իրերի մի վիճակ, որ թէև շատ ողորմելի և անպատուաբերէս է մէջը ապրողներին ճնշումներ գործիչների համար, այնուամենայնիւ ոչ մի կերպով յուսահատեցուցիչ չէ

Կան ամբողջ գիւղեր ամեն կողմ Պարսկաստանում, մանաւանդ հարաւային կողը, որոնք վարժարանի երես տեսած չեն. կան գիւղեր որ տարիների ընթացքում բոլորովին մոռացել են մինչև իսկ իրանց լեզուն, և խօսում են մի տեսակ կոպիտ թուրքերէն. կան նաև գիւղեր ուր մի տիրացու մի քանի աշակերտ գլխին հաւաքած տարիների ընթացքում հազիւ թէ յաջողում է ընթերցանութիւն սովորեցնել, և այն, անպատճառ մի հին քրքրուած ժամագրքով կամ սաղմոսով: Ո՞վ է տեսել այնտեղ նոր դասագրքերի երես:

Բայց այդ բոլոր գիւղերում, թէ դատելով մեր ստացած թղթակցութիւններից և թէ մեր ունեցած խօսակցութիւններից այն գիւղերից Թէհրան եկածպանդուխտների հետ, կայ, մի ջերմ փափագ վարժարան ունենալու:

Գիւղացիները պատրաստ են ամեն կերպով ապրուստի միջոց հայթայթել այն ուսուցչին որ կը յօժարուէր երթալ նոցա մէջ գործելու: Գեաշաղի Փերիոյ Ղարաղանի կողմերը, խօսելով միայն հարաւային մասի վերայ կան տասնեակ գիւղեր, 100—150 տուն բարեկեցիկ բնակիչներով:

Ունին միջոցներ և յօժարակամութիւն, նոցա պակաս է միայն նախաձեռնութիւն:

Միւս կողմից մեր քաղաքներում կայ միշտ մի մեծ խումբ երիտասարդների որոնք ընդունակ են ուսուցանելու, բայց որոնց վերայ քաղաքները գործ են դնում իւրեանց մնասակար թովչութիւնը, և որոնք աւելի լաւ են համարում դեղերել մի քաղաքի մէջ անգործ և դատարկ գրպաններով, քան թէ գնալ գիւղերի մէջ, ծառայել և վարձատրութիւն ստանալ: Այսպիսի երիտասարդների մի ստուար խումբի մօտ, կան նաև յօժարակամ բայց երկչոտ երիտասարդներ. նոքա ունին կամք գիւղերը գնալու, բայց ոչ տեղեկութիւն ունին նոցա վիճակի մասին, և ոչ բաւական քաջասրտութիւն անծանօթի մէջ ձգուելու համար:

Իրերի այս վիճակի մէջ „Շաւիղը“ ուրախութեամբ արձանագրեց այն լուրը, որ Ատրպատականի թեմի ս. Առաջնորդը նշանակել է մի թեմական տեսուչ գիւղական վարժարանների վերայ: Ստանապէս լսել ենք որ Պարսկաստանի և Հնդկաստանի Առաջնորդ Եսայի սրբազանը վաղուց ի վեր ունի մի այդպիսի դիտաւորութիւն, բայց որը մինչև այժմ նորին սրբազութիւն չէ կարողացել գործադրել շնորհիւ թեմական գործերի սարսափելի անկանոնութեան բայց այժմ, կարծում ենք, ժամը հասել է առաջնութիւն տալու մեր կրթական խնդրին, բոլոր ուրիշ խնդիրների վերայ:

Մի թեմական տեսուչ, որ գալիս է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՀԱ ԹԷ ԻՆՉՊԻՍԻ ԿՐՕՆՈՒՍՈՅՑՆԵՐ ՈՒՆԻՆՔ

(Պատահած դէպքեր)

(Շարունակութիւն 30 թւից)

Վերջապէս համբերութիւնից դուրս է գալիս տիկին Ցայտնեանը եւ ասում է.

—Ուսուցիչը իրաւունք չունի իւր առարկայից ինքը ընթերակայ նշանակել, ոչ դրսից՝ կողմնակի անձինք եւ ոչ էլ նոյն դպրոցից, այդ բանը աւագ վարժուհու եւ ժողովի լիակատար իրաւունքն է: Տեսոյ պահանջում է քարտուղարից արձանագրութեան մէջ մտցնել իւր առաջարկած ընթերակաների ազգանունները:

Կրօնուսոյցը տեսնում է այստեղ իրան ամենկերպ յաղթուած, տեսնում է, որ երկու օրից յետոյ յայտնուելու է իւր տգիտութիւնը, այլ եւս չի կարողանում համբերել, բարկանում է, սարսափելի աղաղակներ է բարձրացնում, ձեռքերը սեղանին է զարկում, քարտուղարի թղթերը վերցնում է եւ նախագահի կողմն է շպրտում, ասելով, թէ:

—Դուք ինչ իրաւունք ունիք կրօնից ընթերակայ նշանակելու, դուք ինքներդ, պ. Մուրճեան, անկրօն էր, ինչպէս կարող էք կրօնի ընթերակայ լինել, դուք ամենքդ չնչին արարածներ էք, ուրիշ ոչինչ: Ես այս դպրոցի հիմնադիրն եմ *) եւ իրաւունք ունիմ ամեն բան անելու: Ինձ համար դրսից ընթերակայ կը բերեմ նրան, ումը որ ցանկանում եմ:

Այդ ասելուց յետոյ կրօնուսոյցը եւ իւր խնամի տիկին Կեղծաւորեանը դուրս են փախչում ժողովից:

Քարտուղարը այդ բոլորը արձանագրում է եւ միւս օրը ուղարկում են թեմական տեսչի մօտ:

Հետաքրքիր է իմանալ, թէ ժողովի ժամանակ ձեռագործի ուսուցչուհի օրիորդ Մ. Ղնչոյեանը որ իւր ուսումը նոյն օրիորդաց ուսումնարանումն էր ստացել եւ աւարտել էր երկու բաժանմունք, ինչ էր անում, երբ դեռ կրօնուսոյցը չէր թափել իւր բարկութիւնը: Օրիորդ Ղնչոյեանը անդադար յօրանջում էր եւ թաշկինակով ճանճերին հալածում, որոնք հաւաքւում էին իւր շուրջը եւ խայթում երբեմն ձեռքերը, երբեմն դէմքը եւ երբեմն իւր հայկական քիթը: Բայց երբ սկսուեց կրօնուսոյցի հետ դալմաղալը, այդ ժամանակ նա սթափւում է, գոյնը թռչում եւ եթէ իսկոյն օրիորդաց ուսումնարանի աւագ վարժուհի տիկին Ցայտնեանը օգնութեան չը հասնէր, վաղուց գնացած կը լինէր դէպի Աբրահամի գոգը: Նա կրօնուսոյցի աղմուկից շատ էր վախեցել ու ուշաթափուել. նստեցնում են կառքը եւ տանում տուն:

Ամեն վէճ վերջանում է. ընթերականեր նշանակուն են. նիստը փակւում է դիշերուայ 11 ժամին: Ուսուցչուհիները եւ ուսուցիչները ցրւում են դէպի իրանց բնակարանները:

*) Հոգեւոր իշխանութիւնն այդ քահանային էր յանձնել նոյն դպրոցի շինութեան վերահսկողութիւնը: Այդ շինութեան ժամանակ նոյն դպրոցի համար ղրնուած աղիւսից 10000 ադիւս, աւելի քաղաքաւորի ասենք, առանց իշխանութեան գիտութեան վերցրել էր իւր համար՝ որովհետեւ ինքն էլ սեպհական տուն էր շինում: Ծան. Հեղ.

յանուն հոգևոր իշխանութեան, անմիջապէս գիւղերի մէջ կը զրաւէ վստահութիւն, և կըստեղծէ այնպիսի նպաստաւոր հանգամանքներ որ դժուար թէ մի ինքնագլուխ ուսուցիչ կարողանար գտնել, իւր սեպհական նախաձեռնութեամբ։ Մենք վստահ ենք որ մի այն մէկ շրջագայութեան մէջ թեմական տեսուչը կը հաստատէր մի տասնեակ վարժարաններ գիւղերում, և այնուհետ բաւական կը լինէր տարեկան մէկ ուղևորութիւն, ամեն բան նպատակայարմար ուղղութեան մէջ պահելու համար։

Ամենափրկչեան վանքը որ այժմ կանոնաւոր հասոյթներ ունի, դիւրութեամբ կարող էր հոգալ մի այդպիսի տեսչի ռոճիկը։ Վանքը, որ ամեն տարի նուէրներ և որոշ տուրքեր է ստանում բոլոր իւր թեմից, պարտաւոր է նմանապէս ուշադրութիւն անել թեմական գործերի վերայ, և ոչ թէ ամեն բան գոհել Նոր Ջուղայի հաստատութիւններին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

8 օգոստոսի 1894

Օգոստոս 7-ին կիւրակի օրը, ս. առաջնորդը Բերդաթաղի եկեղեցում ձեռնադրեց պ. Արսէն Վեհունուն վարդապետ, իսկ պ. Արամ Պետրոսեանին քահանայ Ուրմի քաղաքի համար։

Ձեռնադրութեան վեհ և սրտաշարժ արարողութեան տպաւորութեան տակ, նորին բարձր սրբազնութիւնը չը թողեց հանդիսականներին զուրկ քարոզից, որից մօտ երկու ամիս զուրկ էինք, ս. առաջնորդից անկախ պատճառներով։

Սրբազանի քարոզը այնքան գրաւիչ և սրտաշարժ էր, որի տպաւորութիւնը եթէ չեմ սխալւում՝կը մնայ անմոռանալի նորընծաների և հանդիսականների սրտում։ Սրբազանը նոր ընծայ վարդապետին և քահանային յորդոր և խրատներ կարդալուց յետոյ՝ դարձաւ մեզ դավրիժէցիներիս, ասելով։ Ես մտադիր էի այսօր ոչ թէ երկու հոգի ձեռնադրել՝ այլ թէ մի քանի հոգի. բայց ցաւելով պիտի ասեմ, որ ես ժողովրդի իրաւունքը յարգելով թողի իրան, որ ինքն էլ իւր քահանայացուն ընտրէ և ներկայացնէ ինձ, ես էլ ձեռնադրեմ, որից զուրկ են Դավրէժի երկու եկեղեցիներն էլ. փոխանակ քահանայացու ներկայացնելու, ոկսեցիք զանազան կեղտոտ թղթեր կպցնել պատերին։ Այս խօսքերից յետոյ, անտանելի էր յայտարարութիւններ կպցնողների դրութիւնը, որովհետև ամբողջ ժողովուրդը գիտէր նրանց ով լինելը և դժբաղդաբար բոլորն էլ եկեղեցումն էին, երկար խրատներ և յորդոր կարդալուց յետոյ՝ ս. առաջնորդը շարունակեց պատարագը։ Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Լիլաւայի երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը, իւր ուսումնարանների համար տեսուչ է կարգել, Բաղուի Մարդասիրական ուսումնարանների ուսուցիչ՝ պ. Գաբրիել Պապեանցին, այնպէս որ մեր քաղաքում եղող խալֆաների ամբողջ մի տարուայ աշխատանքը մնաց ապարդիւն։

(Հասո)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Դավրէժից մեզ գրում են հետևեալը։ Այս օրերս նորին բարձր սրբազնութիւնը ներկայացաւ թագաժառանգին, Գայմագամին, Քարգուզարին, Դէրիկի, Հաֆթուանի և գաւառական ուրիշ մի քանի գործերի մասին, մանրամասն պատմելուց յետոյ՝ խնդրեց նորանց աչալուրջ ուշադրութիւնը, որոնց մասին թէ հեռագրով և թէ խնդրով ինչպէս լսում ենք և դիմել է արեգակնափայլ Շահին խնդրելով նորա ամենաողորմած տնօրինութիւնը։

—

Շնորհակալութեամբ ստացանք Ա. Կ. Սէքլէմեանի (հետևողութեամբ Ուիլեամ Թէյլորի) „Մարդ ըլլալու միջոցը կամ Կեանքի մէջ յաջողելու ճամբան“ գիրքը որ խիստ հրահանգիչ և նիւթաւոր մի գիրք է։ Գինն է 8 դուրուշ. դիմել Յ. Մատթէոսեանի թղթավաճառանոցը. Կ. Պոլիս, Ֆինջանճըլար եօգուշու, թիւ 27։

—

Անցեալ շաբաթ տեղի ունեցաւ ապակիի գործարանի հիմնադրութեան հանդէսը. մենաշնորհը պատկանում է մի բելճիզացի ընկերութեան։

—

Թէհրանայ ազգային Հայկազեան վարժարանի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ յառաջիկայ սեպտեմբեր մէկին բացուելու է Հայկազեան վարժարանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

—

(Շարունակութիւն)

Մի երիտասարդ ցանկանում է պսակուել մի եւրոպացի օրիորդի հետ, մենք երիտասարդին չենք հարցնում, թի ինչու հայ օրիորդի հետ չէ պսակւում, այլ թէ հարցնում ենք „ինչու քո մայրենի եկեղեցում չես պսակւում“. երիտասարդն պատասխանում է „օրիորդն հայերէն չը գիտէ“ քահանան պատասխանում է թէ Կալկաթայում պսակի կարգն անգլիերէնի թարգմանուած կայ բերել կը տամ և կը պսակեմ ձեզ նորա համեմատ և օրիորդն կարող է լաւ հասկանալ։ Ոչ, երիտասարդի միտքն այն չէ որ պսակուի իւր մայրենի եկեղեցում. բերում է զանազան պատճառներ և պըսակւում է բողոքականաց եկեղեցում... և թողնում ու հեռանում իւր մայրենի եկեղեցուց։

Անցնում է 9 ամիս. Նորապսակ երի-

V.

Առաւօտ է։

Օրիորդաց ուսումնարանի դահլիճի մէջ տեղը դրած է մեծ սեղան, վրան կանաչ մահուդ փռած, մատիտներ, գրչակոթներ ու թանաքամաններ դրուած։ Դահլիճի պատերի առաջ շարուած են աթոռներ, իսկ սեղանի առաջ մէջ տեղը դրած է բազկաթոռ։ Այդ օրը կրօնից հարցաքննութիւն կայ։ Մի քանի ուսուցչուհիներ դեռ չեն եկել։ Այնտեղ է կրօնուսոյց քահանան, ոչ ոքի հետ չէ խօսում, սպասում է իւր ընթերակայ վարդապետի գալուն, որի հետ առանձնապէս տեսնուելուց յետոյ հրաւիրել է հարցաքննութեանը...

Բոլոր աշակերտուհիները հաւաքուել են, առաջ պիտի հարցաքննուին երրորդ բաժանմուքի աշակերտուհիները։ Կրօնուսոյցը դառնում է նորանց եւ հարցնում։

—Դասագրքեր բերել էք։

—Այո, տէր հայր, բերել ենք, պատասխանում են նրանք։

Մտէք ձեր դասատուն փոքր ինչ կրկնենք։

Աշակերտուհիները ներս են մտնում դասատուն եւ նստում են իրանց տեղերը։ Կրօնուսոյցը հրամայում է դոները փակել։ Նորա հրամանը իսկոյն կատարւում է։

—Գիտէք ինչ կայ,—սկսում է տէր հայրը,—դուք ամենքդ կրօնը շատ լաւ գիտէք, բայց քննութիւնը այնպիսի մի բան է, որ իսկոյն կարող էք շփոթուիլ։ Ես այնքան բարի եմ դէպի ձեզ, որ ուզում եմ ամենքդ փոխէք դասատունը։ Հիմա ասացէք ինձ, ձեզանից ո՞վ ինչ յօդուած լաւէ իմանում։

—Ես „Քրիստոսի համբարձումը“ լաւ գիտեմ, աղաղակում է Անտոնեան Զարուհին։

—Տէր հայր, ոչ ոչ այդ ինձ տուէք պատմելու, ես լաւ գիտեմ, բացականչում է Միրզոյեան Աստղիկը։

—Ես „Քրիստոսի Մկրտութիւնը“ լաւ գիտեմ, յայտնում է երրորդ աշակերտուհին։

—Շատ լաւ, շարունակում է կրօնուսոյցը,—ուրեմն քննութեան ժամանակ դու „Քրիստոսի Մկրտութիւնը“ կը պատմես, իսկ դու Զարուհի, „Քրիստոսի համբարձումը“ եւայլն։

—Շատ շնորհակալ ենք, տէր հայր, շնորհակալ. շատ էինք վախենում կրօնից։

—Ձեզ պիտի յայտնեմ, որ այն յօդուածները որոնք շատ դժուար են ծրագրի մէջ չեմ մտցրել, քննութեան ժամանակ էլ չեն հարցնել, իսկ օրինակ եթէ ուրիշները հարցնեն ձեզ „Սահակ Պարթեւի“ մասին ուղղակի նրանց պատասխանեցէք, թէ „չենք սովորել“, իսկ պարթեւ չը բացատրէք թէ ինչ է նշանակում։

Այդպիսով կրօնուսոյցը նախապէս բաժանում է կրօնի յօդուածները աշակերտուհիների մէջ, զանազան պատուէրներ է տալիս քննութեան համար եւ դուրս է գնում դահլիճը, ուր արդէն բոլոր ուսուցիչները հաւաքուել էին եւ սպասում կրօնի ընթերակայ վարդապետի գալուն։

Ուսուցիչներից մէկը լսել էր աշակերտուհիների մէջ բարձրացած յիշեալ աղմուկը եւ դռնից ականջ դրել, որով եւ իմացել էր կրօնուսոյցի յիշեալ մեքենայութիւնը. այդ բանի էութիւնը եւ միմիանց

տասարդի կինն ծնում է մի որդի. հիմայ ինչ պիտի անէ ուրացած հայրն եթէ իւր որդուն ուզէ մկրտել բողոքականաց եկեղեցում, պէտք է երեխային տանէ եկեղեցին, և այնտեղ մկրտէ, հաւանական է որ երեխան եկեղեցի տպնելու ժամանակ մրսէ և հիւանդանայ: Ահա թէ ինչ է մտածում „ես հայոց եկեղեցու կառավարիչն եմ և եթէ ասեմ քահանային որ գայ՝ և երեխային տանն մկրտէ նա պիտի գայ“: Կանչում են քահանային՝ և մկրտում են երեխային տանն: Մենք հարցնում ենք այժմեան միճակաւոր քահանային թէ ինչու Բոմբէյի բոլոր երեխաներն տնում են մկրտւում և ոչ թէ եկեղեցում. մթթէ եկեղեցումն աւազան չը կայ...: Ինչու վերոյիշեալ երեխային տնում մկրտեց մթթէ երեխան հիւանդ էր....:

Բոմբէյի ս. Պետրոսայ եկեղեցին՝ քանդուելու վերայ է. քանդուել բառով չեմ ուզում ասել թէ մինակ եկեղեցին կը քանդուի և աւերակ կը դառնայ այլ թէ եկեղեցին չէ ունենալ այն գումարն որ քահանայի վարձն վճարէ, և մի քահանայից զուրկ եկեղեցին քանդուած է:

Սուրբ Պետրոսայ եկեղեցին ունի մի քանի տներ և խանութներ որոնց վարձն լինում է (250 կում. ռուփիք). այս գումարով վերոյիշեալ կառավարիչն հազիւ թէ կարողանում է՝ վճարել քահանայի վարձն (80—90 ռուփիք) և տիրացուին 25 ռուփիք։

Եկեղեցու տներն քանդուելու վերայ են, Բոմբէյի հայ հասարակութիւնից մի տուն է միայն հետաքրքրւում և պահանջում կառավարչից թէ ինչու եկեղեցու տներն չէ նորոգում. բնականաբար և կառավարիչն էլ նորան ուշադրութիւն չէ դարձնում. ինչպէս երևում է եկեղեցին ոչինչ փող չունէ: Մթթէ ամսական 100 ռուփի չէ մնում եկեղեցուն. 25 ռուփի էլ ուրիշ ծախք հաշուելով: Այդ „մի տանից“ մէկ հոգի Յովսէփ Գ. Յովսէփեանցն՝ մի նամակ է գրում վերոյիշեալ կառավարչին, յիշելով իւր նամակում որ շատ լաւ կը լինի եկեղեցաւ հաշիւները ներկայացնէ, բայց կառավարիչն նորա նամակին մի խայտառակ պատասխան է գրում և չէ ցանկանում որ հաշիւ ներկայացնէ: Ո՞ւր են Բոմբէյի հայ ժողովուրդն չէ որ նոքա են պահպանում իրանց եկեղեցին....:

Եթէ Բոմբէյում եկեղեցի չը լինի հայերի և հայութեան հետքն անգամ չէ երևալ:

Ուստի մենք խնդրում ենք սրբազան Եսայի եպիսկոպոսից որ Հնդկաստան գալու ժամանակ Բոմբէյ հասնելուն պէս այնտեղի եկեղեցու համար մի կարգադրութիւն անէ, և ազատէ մեր եկեղեցին մի բողոքականի ձեռքից:

Անցորդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նոր-Դար լրագրից քաղում ենք հետևեալ լուրը: Բագուի ց մեզ գրում են, որ Սև ծովում ջրահեղձ եղած հանգուցեալ Գրիգոր Գերասիմեան Թումայեանցը հետևեալ կտակն է թողել 1892 թուից գրած: 1) ս. Էջմիածնի տաճարի նորոգութեան համար 10,000 ր., 2) Գէորգեան ճեմարանին 5000 ր., 3) Շուշու թեմական դպրոցին 5000 ր.. 4) Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցին 5000 ր., 5) Բագուի Մարդասիրական ընկերութեանը 20,000 ր., 6) Բագուի "Հռիփսիմեան" օրի որդական դպրոցին 5000 ր., 7) Բագուի „Հայուհեաց“ հաստատուելիք ընկերութեանը 5000 ր., 8) Բագուում նոր կառուցանելի եկեղեցու օգտին 10,000 ր., 9) Բագուի „Մարդասիրական“ ընկերութեանը 10,000 ր., սրի տոկոսով պէտք է պահել Շուշու և Շամախու թեմերում հինգ դպրոց, ընդամենը 75,000 ր.:

—Օգոստոս 10-ին Հռոմից հեռագրում են, որ մի սաստիկ երկրաշարժ է տեղի ունեցել Սիկիլիա կղզում, որից մեծ վնաս է եղել, 13 հոգի փչացել և 29 հոգի վիրաւորուել են:

—Լոնդոն օգոստոս 10: „Տայմզը“ մէկ լուր է հրատարակել այն մտքով որ Թին-Ցինում եղած անգլիական դեսպանները և ներկայացուցիչները պատերազմական նաւեր են պահանջել: Չինաց կառավարութիւնը հրամայել է պետութեան պաշտօնակալներին որ պաշտպանեն օտարահպատակներին և կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչներին:

—Լոնդոնից 11 օգոստոսին հեռագրում են, որ խոլերան տարածուել է Հոլանդայում:

—Շանխայից 11 օգոստոսին հաղորդում են: 12000 ժապօնական զօրք Ֆուզանում նաւից իջել են և 8000 հոգի Ճէնսանում են ցամաք ելել, այս երկու զօրաբաժինները այժմ դէպի Սըուլ են քալում որպէս զի չինական զօրքի ճանապարհը կտրեն, այս 20000-ը օգոստոսի 12-ին Մանչուրիայից մտել են Կորէա և լուր կայ թէ մայրաքաղաքի վերայ են քալում: Զիֆուից մի հեռագիր հաղորդում է որ ժապօնական նաւերը Վայ-Հայ-Վայի նաւահանգստում են երևացել և երեկ նաւամատոյցների մէկի վերայ յարձակում են գործել, սակայն առանց մի յաջողութեան յետ են քաշուել:

—Լոնդոն 12 օգոստոսին հեռագրում են, որ ժապօնական նաւերի յարձակումը Վայ-Հայ-Վայ նաւահանգստի վերայ, իրողութիւն ունի սակայն դեռ այն մասին տեղեկութիւններ չեն հասել: Ժապօնական հեծեալ զօրքը յարձակել է Արթուր նաւահանգստի վերայ, սակայն այդ յարձակումը անյաջող ելք է ունեցել:

—Օգոստոսի 13-ին Փարիզից հեռագ-

մէջ խորհուրդ են անում տոմսակներով քննել:

Դահլիճը լցւում է հանդիսականներով, վերջապէս գալիս է վարդապետը և քննութիւնը սկսւում է:

—Տէր հայր, որպէս զի արդարութիւնը երևայ եւ ձեր աշխատութիւնը աւելի գնահատուի, տոմսակներով հարցնենք, առաջարկում է պ. Մուրճեանը:

Կրօնուսոյցը սպրթնում է:

—Էյ պ. Մուրճեան, զարմանալի անմնաւորութիւն էք, էլի խառնւում էք ուրիշի դործի մէջ, երկրորդ եւ երրորդ բաժանմունքի աշակերտուհիներին ինչ հարկաւոր է տոմսակներով քննել, դիմնադիայի 8-րդ դասատան աշակերտներ հո չեն, պատասխանում է կրօնուսոյցը եւ յուդայական ժպիտ կրկին անցնում է նորա շրթունքներից:

—Տոմսակներ հարկաւոր չեն, կը կանչենք եւ տէր-հայրը մի մի յօդուած կառաջարկէ պատմելու, ընդմտտում է վարդապետը:

Զր նայելով կարելի էր հակասառել եւ ասիպել, որ քննութիւնը տոմսակներով լինի, բայց որովհետեւ աշակերտուհիները կարող էին այդ բանը նկատել եւ վատ գաղափար կազմել ուսուցչի մասին, այդ պատճառով թոյլ են տալիս առանց տոմսակների քննել:

Կանչում են աշակերտուհիներին որոնք թուեակի նման սկսում են անգիր ասել կրօնի ահագին յօդուածները եւ իրանց բոլորովին անհասկանալի դրաբառ աղօթքներ, Աշակերտուհիները մինչեւ անդամ մոռանում են թէ իրանց նախապէս տուած յօդուածները ինչպէս պէտք էր սկսել, այդ դէպքում եւս տէր հայրը նորանց օգնում է, այն է տալիս դասագիրք եւ պատուիրում է կարդալ եւ ապա պատմել:

—Օրիորդ, ասա „հայրմերը“, ասում է վարդապետը աշակերտուհիներից մէկին:

Աշակերտուհին երկար չարչարուելուց յետոյ անգիր կրկնում է „հայր մերը“:

—Թարգմանիր „հայր մեր որ յերկինս ես“, շարունակում է վարդապետը:

—Մենք թարգմանութիւն չենք ընդունում, մանաւանդ որ կաթուղիկոսը հակառակ է աղօթքների աշխարհաբար թարգմանութեանը, պատասխանում է կրօնուսոյցը ժպտալով, որանք „հայրմերը“ սովորել են իբրեւ աղօթք:

—Ինչպէս կարելի է առանց թարգմանելու երեխաները չեն հասկանայ, ասում է վարդապետը:

—„հայր մերը“ առաջին տարի են սովորել, պաշտպանում է իրան կրօնուսոյցը:

—Որովհետեւ առաջին տարի են սովորել, ուրեմն մթթէ այս տարի պիտի մոռանան, չի դադարում վարդապետը:

Կրօնուսոյցի երեսի գոյնը թուչում է, յուդայական ժպիտ կրկին երեւան է գալիս նորա շրթունքների վերայ, նա փոխում է իւր խօսքը,

—Ոչ, ի հարկէ չը պիտի մոռանան, բայց սրանք այնպիսի ընտանիքից են, որ մոռացել են:

—Քրիստոս քանի օր մնաց գերեզմանում, հարցնում է գծագրութեան ուսուցիչ պ. Դ. Մուրճեանը աշակերտուհիներից մէկին:

—Ցիսուն օր, պատասխանում է աշակերտուհին:

Հանդիսականները սկսում են ծիծաղել:

րում են որ Պելճիկայի երեսփոխաններից երկուսին որ Քոնկոյի խնդրոյ կարգադրութեան համար պաշտօն էին տուել, հասել են փարիզ, որոնց հարկաւոր հրահանգներ է տուել որ Ֆրանսայի կառավարութեան հետ այդ խնդիրը կարգադրեն։

—Օգոստոսի 13-ին Բէրլինից հաղորդում են որ գերմանական երկու նաւախումբերի ևս հրամայուել է գնալ Ասիոյ արևելեան կողմը։

—Լոնդոն 13 օգոստոսի Գերմանիոյ Վիլհելմ կայսրը Քոօսից մեկնել է, Ադրշաթում երկու օր մնալու է, վաղը կայսեր ներկայութեան մի մեծ զօրահանդէս է տեղի ունենալու։

—Լոնդոն 13 օգոստոսի Ժապօնական մատանաւերի Վայ-Հայ-Վայ և Արթուր նաւահանգիստների վերայ գործած յարձակման առթով հասած լուրերը հաստատում են որ այս քաղաքներից և ոչ մէկին մէկ վնաս չէ պատահել և Ժապօնական նաւերն ևս զերծ են մնացել վնասներից։ Բերդերից Ժապօնական հեծելազօրների վերայ կրակ է արուել։

—Փարի զ 14 օգոստոսի Քոնկոյի և Ֆրանսայի միջև եղած դաշնագիրը այսօր ստորագրուեցաւ, որոյ զօրութեամբ Ֆրանսայի տիրապետութեան ներքոյ է լինելու Քոնկոյի մի մասը մինչև Նեղոս գետի եզերքը։ Պելճիկայի կառավարութիւնը խոստացել է որ վերին Նեղոսի արևմտեան եզերքում գտնուած հողերը չը գրաւէ. այս հողը Անգղիոյ կառավարութիւնը Քոնկոյի ազատ կառավարութեանն է յանձնել։

—Էօկոհամայի 9 օգոստոս 15-ին հաղորդում են, որ լուր է տարածուել թէ չինական և Ժապօնական հեծելազօրների մէջ կռիւ է տեղի ունեցել, չինացիք յաղթուել են. էլ օտար կռիւ չէ պատահել։

—Լոնդոն 15 օգոստոս։ Խգիվի ճանապարհորդութեան համար դէպի Անվերս և Բրիւսել հարկաւոր կարգադրութիւնները եղել է։

—Լոնդոն 16 օգոստոս. որպէս „Տայմզը“ կարծիք է յայտնում, Ֆրանսայի և Քոնկոյի միջև ստորագրուած դաշնադրութիւնը երբէք հակառակ չէ լինելու Անգղիոյ շահերին, համաձայն այն դաշնագրութեան որ Անգղիոյ և Պելճիկայի միջև կնքուել է։

—Փարիզ 16 օգոստոս. համաձայն այն դաշնագրութեան որ նորերումս կընքուել է Ֆրանսայի և Քոնկոյի ազատ կառավարութեան միջև, Քոնկոյի տէրութիւնը չէ ուզում տիրանալ վերին Նեղոսի արևմտեան եզերքի Վատելայի հիւսիսակողմում գտնուած Լիտո քաղաքին։

—Փարիզ 17 օգոստոս լորդ Դրֆրինը Փարիզ է վերադարձել Աֆրիկէի վերաբերեալ զանազան խնդիրների համար բանակցելու։

—Լոնդոն 17 օգոստոս։ Չինական ներկայացուցիչներից 17 հոգի աշխատում են Բէրլինում տասը միլիոն անգլիական ոսկու մի փոխառութիւն անելու։

—Լոնդոն 17 օգոստոսի հաւանական է որ, Չինաստանը, տասը միլիոն անգլ. ոսկին Բէրլինում և Լոնդոնում փոխառնէ։

—Լոնդոն 28 օգոստոսի յայտնուում է որ չինական կառավարութեան նոր փոխառութիւնը մէկ ու կէս միլիոն անգլ. ոսկի է հասնելու հարիւրին հինգ տոկոսով։ Փոխ տրուած գումարի երկու հինգերորդ մասը գրաշմուած արծաթ դրամ պիտի վճարուի։

—Լոնդոն 19 օգոստոսի ռուսաց ծովակալ Ռաձվոզոֆ, որ Կրոնշդատի նաւերի հրամանատարն է եղել, պաշտօնանկ եղած մէկ պաշտօնեայի ձեռքով սպանուել է։ Ծովակալը մէկ ուրիշ սպայի հետ կառքում նստած գնում են եղել երբ յանկարծ ճանապարհին սպանուում է։ Ոճրագործը իրան ևս սպանել է։

—Էօկոհամա 20 օգոստոսի։ Ժապօնական կառավարութիւնը աշխատում է իւր երկրի մէջ 50 միլիոն դօլարի մէկ փոխառութիւն կնքել և այդ գումարը ասկ Չինաստանի հետ պատերազմի ծախսի համար է։

—Բէրլին 20 օգոստոսի „Հիւս. Գերմանիա լրագիրը“ մի կարևոր խնդիր է յարուցել Ֆրանսայի և Գերմանիայի յարաբերութեանց մասին որ առաջ են եկել Կոգիմիր Պէրիէի նախագահ հաստատուելու օրով. վերոյիշեալ լրագիրը, ուրախակցութիւն է յայտնում այն բանի համար որ վերոյիշեալ երկու պետութիւններն էլ միութեամբ կաշխատեն միմիանց շահերը պաշտպանելու։

—Լոնդոն 21 օգոստոսի հեռագրում են որ Ժապօնացուց կառավարութիւնը ծանկարար գրաւել է Գլասկօ եղած անգլիական „Էալամ“ անունով նաւը, որպէսզի այժմեան պատերազմում կարողանայ հրակել չինացուց նաւերի շարժումների և գործերի վերայ։

—Լոնդոն օգոստոսի 22 երեկ գիշեր ազգային երեսփոխանական ժողովում մէկ վիճաբանութիւն տեղի ունեցաւ թէ արդեօք չինական կառավարութիւնը, համաձայն դաշնագրութեան, Ժապօնական նաւահանգիստների ապահովութիւնն ի նկատի ունենալու է թէ ոչ և կամ թէ անգլիոյ կառավարութիւնը ինչ միջոցներ է ձեռք առել որպէս զի վերոյիշեալ նաւահանգիստները չինացոց յարձակումներից ազատ պահէ։ Արտաքին գործոց նախարարի երկրորդը պատասխանեց որ այդ մասին անգլիոյ կառավարութիւնը կատարեալ հոգացողութիւնն ունի։

—Շանխայ 22 օգոստոսի Կօրէայից Ռէյտերի գործակալութիւնից հասած լուրերը հաստատում են, որ չինացիք մի ահեղ պատերազմում յաղթութիւն են տարել։ Փինկ-Եանկում տեղի ունեցած պատերազմում չինացիք Ժապօնացուց վերայ մեծ յաղթանակ են տարել և նորանց ամրութիւններից և բերդերից վանել և մեծ մասը կոտորել են։ Ժապօնացիք նահանջել և շուտով ապաստանել են Շոնկ-Հոյում ուշտեղ սկսել են պաշտպանուելու միջոցներ ձեռք առնել։ Երկրորդ օրը չինական զօրքը Շոնկ-Հոյի վերայ գնալով մի արիւնահեղ պատերազմից յետոյ փախցրել են նրանց իրանց ամրացած տեղերից։ Ժապօնացիք մեծ վնասների են ենթարկուել։ Չինացուց կրած վնասները, Ժապօնացուց յաղթելու պատճառով դեռ յայտնի չեն։—9000 Ժապօնացիք Սրսուլից մեկնել են դէպի Փինկ-Եանկ։ Մէկ նոր պատերազմի հաւանականութիւնը ակներև է։ Ժապօնացուց զօրքը Ֆուզանում կրկին նաև են նստել և կարելի է Սրուլ գնան։ Առայժմ Կօրէայի մայրաքաղաքը բոլորովին մաքրուած է Ժապօնական զօրքից։ Լուր է պատում որ պապական եկեղեցու մի ներկայացուցիչ որ Էքս քաղաքից էր, Չինաստանից Կորէա գնալու ժամանակ, այն նեղութիւնների պատճառով որ չինական զօրքը նրան տուել է Նիւ-Շանկում հոգին աւանդել է։

—Լոնդոն 23 օգոստոսի „Թայմզը“ խօսելով Ֆրանսայի և Քոնկոյի ազատ կառավարութեան միջև կնքուած դաշնագրութեան մասին, այն կարծիքն է յայտնում, որ Անգլիայի վերին Նեղոսի հողերի տիրապետութիւնը մեծ կարևորութիւն ունի։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԻԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Ձ. Ռ. ՄԻԼԼԷՐ
Թարգմանութիւն անգլերէնից
Մամիկոն Մ. Գրիգորեանցի
Գիրքը բազկացած է 3 հատորից.
Տպագրուում է առանձին առանձին.
Գինն է՝ Պարսկաստանի համար 1 ղրան. արտասահմանի համար 25 կոպէկ։
Դիմել՝ Մամիկոն Մ. Գրիգորեանցին Թէհրան.

Զեռնոտ արժէքներով պատրաստեմ գեղեցիկ ՊԱՐՍԻՑ կամ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԻՆ, ՆՈՐ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐ։ Խնդրում է վաճառողներից ուղարկել իւրեանց ՆՄՈՇՆԵՐԸ վերջնական արժէքը յայտնելով։ Պատասխանատուածները ընդունելի չեն։
Դիմել Հրանտ Ց. Մարիմեան Դավրէժ